ԵՊՀ-ում գործող ՀՀ ԲԿԳԿ-ի իրավագիտության
001 մասնագիտական խորհրդին
պաշտոնական ընդդիմախոս, իրավ. գիտ.
դոկտոր, պրոֆեսոր Ս.Վ. Առաքելյանից

ԿԱՐԾԻՔ

Զարուհի Ռոմիկի Հարությունյանի «Կոռուպցիոն վարքագծի կրիմինալոգիական և հոգեբանական պատճառները» վերտառությամբ ԺԲ.00.05՝ «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ատենախոսության վերաբերյալ

Կոռուպցիայի, մասնավորապես՝ կոռուպցիոն բնույթի հանցագործությունների դեմ պայքարի արդյունավետության բարձրացումը ոչ միայն Հայաստանում, այլև առանց բացառության բոլոր պետություններում և հասարակություններում, խիստ արդիական և կարևորագույն նշանակություն ունեցող հիմնախնդիրներից է: Բանն այն է, որ բացասական տվյալ երևույթը նախ և առաջ խաթարում է պետական կառավարման համակարգը, հեղինակազրկում պետական իշխանության տարբեր ինստիտուտները, խարխլում երկրի բնակիչների վստահությունը՝ իրենց իրավունքների պաշտպանության, հավասարության և սոցիալական արդարության սկզբունքների ապահովման հարցերում: Այդ առումով հատկապես կարևորվում է կոռուպցիոն վարքագծի ձևավորման և դրա զարգացման ու հանցավորի վերաճման հիմնախնդիրների հետազոտությունը՝ առավել ևս, հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետությունում վերջին տարիներին նկատվում է հանցավոր նման դրսևորումների աճի խիստ բացասական միտում:

Վերը նշված հիմնախնդիրների շարքում առանձնահատուկ նշանակություն ունեն քննարկվող վարքագծին նպաստող կրիմինալոգիական և հոգեբանական գործոնները: Նորություն չէ, որ կրիմինալոգիայի հիմնական և առավել բարդ խնդիրներից մեկը հանցավորության պատճառների բացահայտումն է: Դարեր

շարունակ քրեագետները փորձում են պատասխանել հարցին, թե ինչու՞ են մարդիկ հանցանքներ (նաև՝ կոռուպցիոն) կատարում: Այդ կապակցությամբ դեռևս 1980-ականներին Գ.Ա. Ավանեսովն արդարացիորեն նշել է, որ գիտության տվյալ ճյուղի ողջ պատմությունն, ըստ էության, հենց նշված հարցին պատասխան գտնելու շարունակական որոնումն է, որը «հավիտենական» խնդիր է: Այդուհանդերձ, հանցավորությունը և դրա առանձին դրսևորումներն առանց որևէ բացատրության թողնելը կնշանակի ընդհանրապես հրաժարվել կրիմինալոգիայից՝ որպես գիտության ինքնուրույն ճյուղից:

Վերոհիշյալ հանգամանքներն, անկասկած, վկայում են Զարուհի Հարությունյանի ընտրած թեմայի արդիականության, դրա շրջանակներում նրա կողմից իրականացված հետազոտության անհրաժեշտության և հրատապության մասին: Բացի դրանից, ատենախոսական քննարկվող հետազոտության արդիականությունը պայմանավորված է ՀՀ-ում կոռուպցիոն հանցավորության պատճառների բացահայտման, դրա կանխարգելման հետ կապված խնդիրների բացառիկ կարևորությամբ և դրանց հրատապ լուծման անհրաժեշտությամբ:

Այդ համատեքստում պետք է նշել, որ հեղինակին հաջողվել է պատշաճ մակարդակով բազմակողմանի և համալիր վերլուծության ենթարկել մարդու պահանջմունքների, անձի սոցիալական առանձնահատկությունների և այլ հանգամանքների՝ որպես կոռուպցիոն վարքագծին նպաստող գործոնների հիմնախնդիրները, բացահայտել դրանց կապակցությամբ ոչ միայն իրավաբանական, այլև հոգեբանական, սոցիոլոգիական տեսության մեջ արտահայտված մոտեցումներում առկա տարակարծություններն ու յուրովի մեկնաբանել դրանք, ինչպես նաև անհրաժեշտ խորությամբ վերլուծել սեփական սոցիոլոգիական հարցումների և հարցազրույցների արդյունքները, վեր հանել քննարկվող բացասական երևույթին նպաստող որոշակի գործոնները և դրա հիման վրա նախանշել հանցավորության տվյալ դրսևորման կանխարգելման կոնկրետ ուղղություններ: Ընդ որում, այդ կապակցությամբ հեղինակի եզրահանգումներն ու առաջարկություններն առանձնանում են ինքնուրույնությամբ և տեսական հիմնավորվածությամբ: Մասնավորապես, առանձին ուշադրության են արժանի ատենախոսի հետևյալ դատողությունները.

- ✓ Կոռուպցիոն վարքագծի դեմ պայքարելու համար անհրաժեշտ է ոչ թե պայքարել պահանջմունքների դեմ, այլ իրավաչափ հնարավորություններ ձևավորել դրանք բավարարելու համար, քանի որ անգամ օրինապահ, բարոյական հատկանիշներով օժտված անձը կարող է դիմել նման վարքագծի, եթե ունի չբավարարված պահանջմունքներ: Այնպես չէ, որ բոլոր մարդիկ, ովքեր, օրինակ, կաշառք են վերցնում, զուրկ են բարոյական հատկանիշներից կամ չեն գիտակցում կոռուպցիայի վնասը: Պարզապես, այստեղ գործում է ինքնապահպանման բնազդը: Ուստի, եթե պետական ծառայողը չապահովվի ապրուստի համար ողջամտորեն անհրաժեշտ միջոցներով, ապա նրա կողմից կոռուպցիոն վարքագիծ դրսևորելու խթաններն էապես կավելանան:
- ✓ Բացասական ազդեցությունների արդյունքում ձևավորվում է մարդու կյանքի որոշակի ոճ: Նա ձգտում է ամեն ինչ իր սեփական շահին ծառայեցնել, միջավայրում ամեն բան դասավորել այնպես, որ յուրաքանչյուր իրավիճակից շահած դուրս գա: Ժամանակի ընթացքում մարդը դառնում է իշխանատենչ, ագրեսիվ և ձգտում ամեն գնով գերազանցել մյուսներին: Նման զգացողություն ունեցողների համար կոռուպցիան կարող է հանդիսանալ ինչպես փոխհատուցում, այնպես էլ գերփոխհատուցում, որի պարագայում անձը ձգտում է իշխանության, ճանաչման, հասարակության համար ընդունելի լինելու: Այսինքն՝ ենթագիտակցության մեջ առկա խնդիրը լուծելու համար նա կարող է պատրաստ լինել խախտելու օրենքը, ցուցաբերելու կոռուպցիոն վարքագիծ՝ իշխանության հասնելու համար, միայն թե բավարարի այդ պահանջմունքը և փոխհատուցի իր թերարժեքության բարդույթը:
- ✓ Համապատասխան պետական պաշտոնների հավակնորդների համար հարկ է նախատեսել, այսպես կոչված, հակակոռուպցիոն փորձաքննություն իրականացնելու պահանջ: Մասնավորապես, դրա արդյունքում հնարավոր կլինի պարզել տվյալ պաշտոնին հավակնող անձանց հակակոռուպցիոն դիմադրողականության, կոռուպցիոն վարքագիծ դրսևորելուց զերծ մնալու հետ կապված հարցերը: Ընդ որում, նման դիմադրողականության առկայության դեպքում միայն խոսք կարող է գնալ համապատասխան պաշտոնին տվյալ հավակնորդին նշանակելու հնարավորության մասին

✓ Ընդգծվել է նաև հակակոռուպցիոն վարքագիծը խթանող, դրան նպաստող գործոնները հնարավորինս չեզոքացնող հատուկ դասընթացների (այդ թվում՝ ինչպես նախադպրոցական, այնպես էլ դպրոցական տարիքի երեխաների, ուսանողների և մեծահասակների համար), տեսաֆիլմերի, մուլտֆիլմերի, հոլովակների մշակման, ստեղծման և տարբեր եղանակներով տարածման անհրաժեշտությունը: Մասնավորապես, ներկայացվել են տարբեր արժեքավոր հիմնավորումներ, որ նման մոտեցումն էապես կնպաստի հակակոռուպցիոն դիմադրողականության ձևավորմանը և կխթանի հակակոռուպցիոն վարքագիծը:

Հարկ է նշել նաև, որ գրախոսման ներկայացված ատենախոսության կառուցվածքը տրամաբանական է և դրանում քննարկվող հիմնախնդիրների բովանդակությամբ պայմանավորված: Այսպես, աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, որոնք ներառում են կոռուպցիոն վարքագծի կրիմինալոգիական և հոգեբանական պատճառներին վերաբերող հիմնախնդիրներին նվիրված տասնմեկ պարագրաֆ, եզրակացությունից, օգտագործված նորմատիվ իրավական ակտերի և գրականության ցանկից: Ընդ որում, հեղինակի օգտագործած գրականության ցանկը վկայում է հետազոտության ընթացքում նրա կողմից բավականին հարուստ տեսական և նորմատիվ բազայից օգտվելու մասին:

Առանձին ուշադրության են արժանի նաև աշխատանքի շրջանակներում հեղինակի կողմից ներկայացված հավելվածները, որոնք վերաբերում են իրականացված սոցիոլոգիական հարցումների և հարցազրույցների առանձնահատկություններին ու դրանց արդյունքներին:

Միևնույն ժամանակ, քննարկվող ատենախոսությունը, ինչպես և գիտահետազոտական աշխատանքի ցանկացած արդյունք, զերծ չէ որոշ վիճելի մոտեցումներից, դիտարկումներից, կարծիքներից, առաջարկություններից, որոնց կապակցությամբ հարկ է առանձնացնել հետևյալ նկատառումները.

1. Ատենախոսական տվյալ հետազոտության փորձևսռնական հիմք են հանդիսացել միայն ՀՀ պետական կառավարման ակադեմիայում վերապատրաստումների մասնակցած պետական ծառայողների, դատական, դատախազական, քննչական համակարգերի ներկայացուցիչների և պրոբացիայի ծառա-

յության աշխատակիցների շրջանում իրականացված սոցիոլոգիական հարցումների և հարցազրույցների արդյունքները: Այսինքն՝ դրանց չեն ներգրավվել կոռուպցիայի դեմ պայքարին անմիջական առնչություն ունեցող մի շարք այլ կարևոր ոլորտներ ներկայացնողները, մասնավորապես՝ դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայողները, քրեակատարողական ծառայության աշխատակիցները, կոռուպցիայի կանխարգելման հիմնախնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները: Մինչդեռ վերջիններիս կարծիքների և մոտեցումների վերլուծությունը ևս կարող էր էական նշանակություն ունենալ բացասական քննարկվող երևույթի կրիմինալոգիական և հոգեբանական պատճառների առավել ամբողջական և բազմակողմանի բացահայտման գործում:

2. Աշխատանքի շրջանակներում և մասնավորապես՝ պաշտպանության ներկայացվող դրույթ 2-ում, հեղինակն առաջարկում է պետական պաշտոնյաների բարեվարքության և առաքինության ստուգման նպատակով ներմուծել «հակակոռուպցիոն վարքագծի ռիսկերի գնահատման մեխանիզմ»: Այդ առումով, նախ, անհասկանալի է «հակակոռուպցիոն վարքագծի ռիսկեր» ձևակերպումը: Կարելի է ենթադրել, որ հեղինակը նկատի ունի «կոռուպցիոն վարքագծի ռիսկերը», քանզի հակակոռուպցիոնի պարագայում հարկ է խոսել ոչ թե ռիսկերի, այլ դրական ակնկալիքների մասին:

   Բացի դրանից՝ հեղինակը չի կոնկրետացնում և մանրամասնում, թե ինչ է իրենից ներկայացնելու առաջարկվող մեխանիզմն ու ինչպես է այն իրագործվելու և ինչ հետևանքներ է ունենալու:

   Նշված նկատառումների կապակցությամբ, թերևս, ակնկալվում են ատենախոսի լրացուցիչ պարզաբանումներ:

3. Խնդրահարույց է հեղինակի դիրքորոշումն առ այն, որ օրենքով սահմանված կարգով պետք է արգելել պետական պաշտոնյաների մուտքը խաղատներ, քանի որ խաղի պահանջմունք ունեցող պաշտոնյան մեծ սպառնալիք է դառնում պետության համար (տե՛ս Ատենախոսության էջեր 57-59-ը): Նման համարձակ կարծիք արտահայտելու համար, թերևս, նախ և առաջ

պետք էր վիճակագրական հետազոտություն իրականացնել այն հարցերի շուրջ, թե քանի՞ պաշտոնատար անձ է իր խաղի պահանջմունքը բավարարելու համար խաղատներում վատնել պետական միջոցները և արդյո՞ք նրանց թիվն այնքան մեծ է, որ լուրջ մտահոգության տեղիք է տալիս: Դա կարելի էր իրականացնել, մասնավորապես, քրեական համապատասխան վարույթների նյութերն ուսումնասիրելով: Բացի դրանից, մարդիկ մոլեխաղերով կարող են զբաղվել ոչ միայն խաղատներում, այլև, օրինակ՝ իրենց բնակարաններում, հյուրանոցներում, հանգստյան տներում, առցանց տարբեր հարթակներում, որոնց պարագայում պատշաճ վերահսկողություն սահմանել և իրականացնելը գրեթե անհնար են:

4. Խնդրահարույց է նաև հեղինակի առաջարկությունը՝ կապված կաշառք տվողի և կաշառքի միջնորդի համար օրենսդրորեն քրեական պատասխանատվությունից ազատող խրախուսական նորմեր սահմանելու անհրաժեշտության հետ (տե՛ս պաշտպանության ներկայացվող դրույթ 3-ը, ինչպես նաև Ատենախոսության էջեր 143-144-ը): Մասնավորապես, ըստ նրա, անհրաժեշտ է ՀՀ քրեական օրենսգրքում նախատեսել իրավակարգավորումներ, որոնց համապատասխան՝ նշված սուբյեկտները կազատվեն քրեական պատասխանատվությունից, եթե օրենքով սահմանված կարգով իրավապահ մարմիններին հայտնեն իրենց դրսևորած կոռուպցիոն վարքագծի մասին: Մինչդեռ նման մոտեցումները ոչ միայն խիստ վիճելի են և լրացուցիչ բազմակողմանի հիմնավորումներ պահանջող, այլև շեղվում են կոռուպցիայի դեմ պայքարի շրջանակներում Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորություններից: Այդուհանդերձ՝ նման իմպերատիվ իրավակարգավորումներ առաջարկելուց բացի, կարելի էր քննարկել նաև վերը նշված անձանց քրեական պատասխանատվությունից ազատելու հայեցողական հնարավորության նախատեսման (ոչ թե «ազատվում է», այլ «կարող է ազատվել» ձևակերպմամբ) նպատակահարմարությունը:

Վերոհիշյալ նկատառումները, սակայն, էապես չեն ազդում աշխատանքի ընդհանուր որակի, տեսական և, հատկապես՝ գործնական նշանակության վրա, այլ պա-

րունակում են դատողություններ, հարցադրումներ, դիտարկումներ, որոնց կապակցությամբ համապատասխան պարզաբանումները կարող են առավել բարձրացնել դրա արժեքավորությունը:

Ինչ վերաբերում է աշխատանքի սեղմագրին, ապա այն ամբողջովին համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը:

Ամփոփելով՝ հարկ է նշել, որ քննարկվող ատենախոսությունը հավաստի և արժանահավատ, գիտականորեն հիմնավորված ու փաստարկված հետազոտության արդյունք է, որն ապահովվել է արդի իրավագիտության մեթոդաբանության կիրառմամբ, հարուստ տեսական գրականության, նորմատիվ աղբյուրների և փորձառնական տվյալների լայն օգտագործմամբ:

Վերոգրյալի հիման վրա կարելի է եզրակացնել, որ Զարուհի Ռոմիկի Հարությունյանի «Կոռուպցիոն վարքագծի կրիմինալոգիական և հոգեբանական պատճառները» վերտառությամբ ԺԲ.00.05՝ «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ Կառավարության 08.08.1997թ. թիվ 327 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանների շնորհման կանոնակարգի» 7-րդ կետի պահանջներին: Այսինքն՝ տվյալ ատենախոսությունը կարելի է գնահատել իբրև գիտության տվյալ բնագավառում կարևոր նշանակություն ունեցող խնդրի լուծում: Հետևաբար, ատենախոսն արժանի է իր կողմից հայցվող գիտական աստիճանի շնորհման:

Պաշտոնական ընդդիմախոս՝
ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի պրոֆեսոր,
իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ս.Վ. Առաքելյան

Ս.Վ. Առաքելյանի ստորագրությունը հաստատում եմ՝
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի
դեկանի տեղակալ Ա.Հ. Պետրոսյան